# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2019 թվականի N: 549-Ա ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԵՆՅԱՑ, ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԵՎ ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի հունվարի 8-ի թիվ 01/17.1/10285-18 հանձնարարականը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայրենյաց, Երազգավորս և Լեռնակերտ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականներով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական

հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարերով:

3. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 549Ա որոշման

# 2019 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԵՆՅԱՑ, ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԵՎ ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

| հ/հ | Համայնքի անվանումը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակա-հատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը | Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Հայրենյաց | 2019 թվականի նոյեմբերի 6-ից 12-ը | Պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, խմբի ղեկավար,<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ,<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Արամ Անտոնյան,<br><br>Արտավազդ Գևորգյան<br><br>Նաիրա Մարտիրոսյան |
| | | | Քաղաքաշինության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Մկրտիչ Ասատրյան |
| | | | Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Տիգրան Անանիկյան |
| | | | Հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Արմեն Մինասյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Մշակույթի բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Աղավնի Հարությունյան |
| 2. | Երազգավորս | 2019 թվականի նոյեմբերի 7-ից 13-ը | Պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, խմբի ղեկավար<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Ռուբեն Հարությունյան<br><br>Զարիկ Մուրադյան<br><br>Սուրեն Ավետիսյան |
| | | | Հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Էմիլ Պետրոսյան |
| | | | Քաղաքաշինության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Հուրիկ Մարտիրոսյան |
| | | | Անասնաբուժության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Արամ Վարձելյան |
| | | | Պաշտպանության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Սարգիս Խաչատրյան |
| | | | Սոցիալական պաշտպանության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Մանուկ Մանուկյան,<br><br>Էդվարդ Ալեքսանյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Լեռնակերտ | 2019թվականի նոյեմբերի 11-ից 15-ը | Հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ, խմբի ղեկավար,<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետ, խմբի անդամ | Զորիկ Խաչատրյան<br>Հարություն Նալբանդյան |
| | | | Պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ,<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Արմեն Հարությունյան<br>Վաղինակ Հովհաննիսյան |
| | | | Քաղաքաշինության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Գառնիկ Հայդոյան |
| | | | Անասնաբուժության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Արամ Վարձելյան |
| | | | Կրթության բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Արմեն Ստամբոլցյան |
| | | | Արտակարգ իրավիճակների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Արայիկ Գրիգորյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է